

## Աստղիկ Մովսիսյան

### ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐՔԻՉՄԸ

(Ֆրանսիայի հայ համայնքի օրինակով)

Բանալի բառեր- լոբբիզմ, հայկական լոբբինգ, ֆրանսահայ համայնք, ֆրանսահայ լոբբիզմ, Հայ դատ, ԼՂՀ միջազգային ճանաչում, շահերի պաշտպանություն:

#### Մուտք

Հայ ժողովրդի մի զգալի մասն իր բազմադարյա պատմության տարբեր ժամանակաշրջաններում հարկադրված է եղել հեռանալու հայրենիքից ու բնակություն հաստատելու օտար երկրներում: Այսօր էլ, ցավոք, արտաքին ու ներքին մի շարք գործոնների ազդեցությամբ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ապրում է ավելի մեծ թվով հայություն, քան բուն հայրենիքում:

Ձևավորվելով դարերի ընթացքում՝ հայկական Սփյուռքն իր վերջնական դիմագիծը ստացավ այն բանից հետո, երբ Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենազրկված հայությունը ցրվեց աշխարհով մեկ և այդ կերպ համալրեց արդեն գոյություն ունեցող հայկական համայնքները: Մերօրյա հայկական Սփյուռքի մի սովոր մասն էլ կազմում է հետանկախացման շրջանում Սպիտակի երկրաշարժի, արցախյան պատերազմի, տնտեսական շրջափակման և բազմաթիվ այլ գործոնների հետևանքով արտագաղթած հայությունը: Հայտնվելով օտար երկրներում, օտար մշակույթների ազդեցության տակ և ինտեգրվելով հյուրընակող հասարակությանը՝ հայությունը, այնուամենայնիվ, կարողացել է կազմավորել համայնքներ, պահել իր ազգային ինքնությունը և ապրել ներազգային կյանքով: Հայապահպանությունը եղել և այսօր էր շարունակում է մնալ Սփյուռքի ամենագլխավոր խնդիրը: «Հայ մնալը օտարութեան մէջ,- գրում է Չորմիսեանը,- քաղաքական հարց է: Կարելի է ըսել, որ հայկական իւրաքանչիւր հատուածի համար, ազգային գոյութեան պահպանումը գլխաւոր և առջնակարգ քաղաքական խնդիր է»<sup>1</sup>: Ուստի ստեղծվել են բազմաթիվ հասարակական, քաղաքական բարեգործական, կրթական, մշակութային, երիտասարդական կազմակերպություններ, որոնց հովանու ներքո էլ աշխարհի տարբեր երկրներում գործում են ամենօրյա և մեկօրյա դպրոցներ, մշակութային, մարզական կենտրոններ, ծերանոցներ, հիվանդանոցներ, կազմակերպվում են հայկական մշակույթի և լեզվի

<sup>1</sup> Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Դ, Հայոց Սփիւռքը, Ա գիրք, Ֆրանսահայերու պատմութիւնը, Պէյրուս, 1975, էջ 7:

պահպանմանն ու տարածմանն ուղղված միջոցառումներ, նշվում են ՀՀ և ԼՂՀ տոներն ու տարելիցները, անցկացվում են բարեգործական միջոցառումներ:

Կազմավորվելով իբրև մեկ ամբողջական մարմին՝ Հայկական սփյուռքում առաջացավ ազգային շահերը պաշտպանելու գաղափարը, ու ստեղծվեցին շահերի պաշտպանության (լոբբիստական) կառույցներ և կազմակերպություններ:

#### ա. Լոբբիզմ երևույթը

Լոբբիզմը քաղաքական համակարգի ինստիտուտ է, որը ֆիզիկական անձանց, իրավաբանական կազմակերպությունների (ինչպես նաև լոբբիստական մասնագիտական ընկերությունների և հասարակական խմբերի) կողմից պետական կառավարման մարմինների պաշտոնյաների վրա ազդելու գործընթացն է՝ քաղաքական հարցերում իրենց համար շահավետ լուծումների հասնելու նպատակով<sup>1</sup>:

Դեռևս 16-րդ դարում «լոբբի» բառը գործածվում էր միջնացքի կամ վանքերում փակ պատկերասրահների նշանակությամբ: Դարեր անց լոբբի են անվանել անգլիական արքունիքում զբոսանքի համար նախատեսված տարածք<sup>2</sup>: Վեսթմինսթերյան պալատում, որտեղ նիստեր էր գումարում Մեծ Բրիտանիայի պառլամենտը, կար երկու միջանցք, ուր և պառլամենտի նիստերի միջև ընկած ժամանակ հանգստանում էին պատգամավորները, որոնք առանձնասենյակներ չուներին: Երկրի տարբեր ծայրերից նրանց մոտ էին գալիս բնակիչները՝ խնդրանքներով: Լոբբիներն հենց այդ միջանցքներն էին:<sup>3</sup>

Մասնագետների մի մասի կարծիքով՝ «լոբբիզմ» եզրը քաղաքական երանգ է ստացել 18-րդ դարում ԱՄՆ-ում, երբ այս բառի տակ սկսեցին հասկանալ մի վայր, որտեղ մարդիկ հնարավորություն էին ստանում իրենց տեսակետը հասցնելու Ներկայացուցիչների պալատի անդամներին և սենատորներին: Օրենքով արգելվում էր մուտքը նիստերի դահլիճ, այդ պատճառով «հայցվորները» չէին կարողանում ընդունարաններից և միջանցքներից առաջ անցնել, ուստի նրանց սկսեցին անվանել լոբբիստներ:<sup>4</sup>

Համաձայն մասնագետների մյուս մասի տեսակետի՝ այս եզրն սկսել է կիրառվել է 18-19-րդ դարերում, ԱՄՆ նախագահ Ու. Ս. Գրանտի նախագահության շրջանում և կապվում է Վաշինգտոնի Վիլարդ հյուրանոցի միջանցքի հետ, քանի որ այս հյուրանոցում էին կանգ առնում նախագահը և նիստերին ժամանած պառլամենտականները: Այս միջանցքում էլ նրանք հանդիպում էին մարդկանց ու

<sup>1</sup> Տե՛ս Профессиональный словарь лоббистской деятельности, [http://www.lobbying.ru/dictionary\\_word.php?](http://www.lobbying.ru/dictionary_word.php?)

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Государственная власть и лоббизм, <http://vkjournal.ru/doc/1283325>.

<sup>4</sup> Տե՛ս Профессиональный словарь лоббистской деятельности, [http://www.lobbying.ru/dictionary\\_word.php?](http://www.lobbying.ru/dictionary_word.php?)

քննարկում նրանց տեսակետներն ու ցանկությունները պետական քաղաքականության տարբեր հարցերի հետ կապված: Նախագահը դրամ և նվերներ էր ընդունում՝ ցանկությունները բավարարելու համար, որի հետևանքով լոբբիզմն աստիճանաբար սկսում է ընկալվել կաշառակերության հոմանիշի ձևով<sup>1</sup>:

Սկզբնական շրջանում լոբբիստների համագործակցությունը քաղաքական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների հետ իրապես ուներ կոռումպացված բնույթ, բայց 19-րդ դարի վերջերին արդեն լուրջ հեղափոխություն կատարվեց լոբբիստական իրականության մեջ, երբ հայտնի լոբբիստ Սեմ Ուորդը սկսեց քաղաքական գործիչներին, պաշտոնյաներին համոզել ոչ թե փողով, այլ՝ խոսքով:

Ըստ իրենց գործունեության ուղղվածության առանձնացվում են քաղաքական, սոցիալական, տնտեսական, տարածաշրջանային, օտարերկրյա (կամ էթնիկ) և հատուկ լոբբիստական խմբեր<sup>2</sup>:

«Էթնիկ լոբբիները, (հաճախ անվանում են նաև արտաքին քաղաքականության շահերի խմբեր),- գրում է Թոմաս Ամբրոսիոն,- ձևավորվում են մշակութային, էթնիկական, կրոնական կամ ռասայական կապերի հիման վրա ու նպատակ ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդել իրենց բնական երկրի արտաքին քաղաքականության վրա՝ ի նպաստ իրենց հայրենիքի և արտասահմանում բնակվող հայրենակիցների շահերի պաշտպանության»:<sup>3</sup>

Հայկական լոբբիզմը էթնիկ լոբբիզմի տիպիկ օրինակ է:

#### բ. Հայկական լոբբինգը

Հայկական լոբբիստական խմբերի գործունեությունն ուղղված է ՀՀ-ի, ԼՂՀ-ի և աշխարհասփյուռ հայության շահերի պաշտպանությանը: Վերջիններս մեծ ավանդ են ներդրել հատկապես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործում: «Հայկական սփյուռքային խմբերը,- գրում են տեսաբաններ Յոսսի Շեինը և Ահարոն Բարֆը,- արևմտյան ՋԼՄ-ներին, գիտական շրջանակներին և կառավարություններին Հայոց ցեղասպանության փաստը ճանաչել տալու հարցում առաջին գծում են: Նրանց լոբբիստական խմբերը հաջող կերպով ազդում են եվրոպական խորհրդարանների և ամերիկյան օրենսդիրների վրա ընդունելու Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևեր՝ հակառակ Թուրքիայի հերքումներին,

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Հայկական լոբբինգը. կազմակերպված քարոզչություն աշխարհում ի նպաստ հայության, <http://emporium.am/am/media/pr/3319-lobby>:

<sup>3</sup> Ambrosio T., Ethnic Identity Groups and US Foreign Policy, London, 2002, p 2:

բողոքի ցույցերին և դիվանագիտական ջանքերին՝ խափանելու այդպիսի որոշումների ընդունումը»<sup>1</sup>:

Հայկական լրբբիստական խմբերն ակտիվ գործունեություն են ծավալում ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Կանադայում, Ավստրալիայում, քանի որ այդ երկրներում (խոսքի ազատության պայմաններում) նրանք ունեն գործունեության առավել լայն հնարավորություններ:

Հայկական լրբբինգը աշխարհում առավել լավ կազմակերպված ու հայտնի լրբբինգներից է, և այդ մասին փաստում են մի շարք տեսաբաններ: Դ. Օտտավեզը և Դ. Մորգանը դեռևս 1990թ. հայտարարում էին, որ հայկական և հրեական լրբբինգերը «Վաշինգտոնի երկու ամենալավ կազմակերպված և ֆինանսավորված լրբբինգներն են»<sup>2</sup>: Է. Սեներջյանը 1997թ. իր զեկույցում նշում է, որ երեք ամենարդյունավետ ազգային լրբբինգներն են իսրաելականը, հունականը և հայկականը<sup>3</sup>: Հայտնի տեսաբան Թոմաս Ամբրոսիոն էլ իր «Ազգային ինքնության խմբերը և Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը» գրքում աշխարհի առավել հայտնի լրբբիստական կառույցների շարքում նշում է նաև Ամերիկայի հայկական համագումարը. «Առավել հայտնի էթնիկ լրբբիստական խմբերն են Լեհ-ամերիկյան կոնգրեսը, Արաբ-ամերիկյան ազգային ասոցացիան, Ամերիկայի Իսրաելական հատուկ հարցերի կոմիտեն, Ամերիկայի հայկական համագումարը, Ամերիկայի Հունական հատուկ հարցերի կոմիտեն»<sup>4</sup>: Քանի որ 20-րդ դարում հայկական լրբբիզմն առավելապես ակտիվ էր ԱՄՆ-ում, ուստի տեսաբաններն առավել հաճախ խոսել են ԱՄՆ-ի հայկական լրբբիզմի մասին:

Հայկական լրբբիստական կառույցներից ու կազմակերպություններից առավել ազդեցիկներն են Ամերիկայի հայկական համագումարը (Armenian Assembly of America), ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը Ամերիկայի հայ ազգային կոմիտեն (ANCA), Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովը (The Armenian-American Political Action Committee), Արդարության և ժողովրդավարության հայ-եվրոպական դաշնությունը (European Armenian Federation for Justice and Democracy - Belgium), Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդը (Co-ordination Council of Armenian organisations of France), Ավստրալիայի հայ դատի հանձնախումբը (Armenian National Committee, Australia):

1944թ ԱՄՆ-ում (Նյու Յորք) ՀՅԴ-ն կազմեց Հայ դատի հանձնախումբը (Armenian National Committee), որը հայ ժողովրդի իրավունքները ներկայացրեց Միավորված ազգերի կազմակերպությանը: Հայոց ցեղասպանության հիսնամյակի առիթով Սփյուռքի

<sup>1</sup> Shain Y., Barth A., Diasporas and international relations theory, The Armenian case, <http://www.fas.nus.edu.sg/migration/newsevents/docs/Diasporas%20and%20IR%20Theory.pdf>.

<sup>2</sup> Paul D.M., Paul R. A., Ethnic Lobbies and US Foreign Policy, Boulder, 2009, էջ 3:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Ambrosio T., Ethnic Identity Groups and US Foreign Policy, London, 2002, p. 3:

բոլոր համայնքներում ՀՅԴ-ն կազմեց հատուկ հանձնախմբեր, որոնք էլ այնուհետև կոչվեցին ՀՅԴ Հայ դատի հանձնախմբեր և գործում են առ այսօր: Մի շարք երկրներում էլ կան Հայ դատի գրասենյակներ<sup>1</sup>: Հայ Ղատն ունի վեց գրասենյակ և տասնյակ հանձնախմբեր: Դրանք հաստատվել միջազգային քաղաքական կյանքում կարևոր դերակատարում ունեցող մայրաքաղաքներում՝ Վաշինգտոնում, Մոսկվայում, Բրյուսելում, Բեյրութում: Մոտ 70 տարածաշրջանային, շրջանային, նահանգային և քաղաքային մակարդակի հանձնախմբեր էլ գործում են ավելի քան 30 երկրներում: Գործում են նաև Թեհրանի, Փարիզի, Բուենոս Այրեսի, Գլենդելի (շրջանային և տեղական), Օտտավայի և Տորոնտոյի (տեղական) գրասենյակները:

Նախորդ դարի 70-ական թթ. ԱՄՆ-ի հայությունը ստեղծեց մի կազմակերպություն: Այդ Ամերիկայի հայկական համագումարն էր (1972թ.) անկուսակցական հիմունքներով: Դա ԱՄՆ-ում գործող առաջին հայկական լոբբիստական կազմակերպությունն էր, որն ակտիվորեն աջակցում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը, ծավալում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակման վերացման, ԱՄՆ կառավարության կողմից Ադրբեջանին ցուցաբերվող տարեկան ֆինանսական աջակցության սահմանափակման («Ազատության աջակցման մասին ակտ» 907-րդ բանաձևի), ամերիկահայության շահերի պաշտպանության գործունեություն:<sup>2</sup>

#### գ. Ֆրանսիայի հայ համայնքը և նրա լոբբիստական կազմակերպությունները

Ֆրանսիայի հայկական համայնքը բավականին հին ու հարուստ պատմություն ունի: Այն Արևմտյան Եվրոպայի առաջին պետություններից է, ուր հաստատվել են հայերը:

Սփյուռքի գոյավորման շրջանում՝ 1920-ական թթ., Ֆրանսիայում և մասնավորապես Փարիզում է հավաքվում հայ մտավորականությունը, Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունը, և Ֆրանսիան վերածվում է Սփյուռքի ոչ պաշտոնական կենտրոնի: Փարիզը համաշխարհային դիվանագիտության և քաղաքական աղերսների խաչաձևման միջազգային հրապարակ էր: «Իսկ տվյալ պարագայում կոնկրետը Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո հայության ճակատագիրը Փարիզի հետ կապելու իրողությունն էր: Այստեղ կնքվեց 1920 թվականի Սևրի (Փարիզի արվարձան) պայմանագիրը: Այստեղ

<sup>1</sup>Տե՛ս Հայ Ղատի կեդրոնական խորհուրդ, Հայ Ղատի յանձնախմբերն ու գրասենյակները, [http://ancnews.info/?page\\_id=837](http://ancnews.info/?page_id=837):

<sup>2</sup>Տե՛ս Armenian Assembly of America, <http://www.aaainc.org/index.php?id=387>:

իրենց գործունեությունը ծավալեցին թե՛ Ազգային պատվիրակությունը, թե՛ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը»<sup>1</sup>:

1970-ական թթ. էլ Մերձավոր Արևելքում տարածաշրջանային անկայունության հետևանքով մեծ թվով հայեր համալրում են ֆրանսահայության շարքերը: 1994թ. արդեն Ֆրանսիայում բնակվում էին շուրջ 400 հազար հայեր<sup>2</sup>: Հետագա տասնամյանների ընթացքում ևս Ֆրանսիայի հայկական համայնքի ստվարացման միտումը շարունակվում է՝ հիմնականում Մերձավոր և Միջին Արևելքից և Հայաստանից արտագաղթած հայության հաշվին:

Ներկայումս Ֆրանսիայում բնակվում են շուրջ 450-500 հազար հայեր, որոնք գլխավորապես կենտրոնացած են Փարիզում (Ալֆորվիլ, Առնուվիլ լե Գոնես, Բանյո, Իսի դե Մուլինո, Շավիլ, Կլամար), Մարսելում, Լիոնում (Գրենոբլ, Դեսին, Սենտ Էտիեն, Վիեն), Վալանսում, Նիսում, Կաննում, Սեն Ռաֆայելում և այլուր:

Ֆրանսիայի հայկական համայնքն ապրում է հասարակական-քաղաքական աշխույժ կյանքով, հիմնվել են բազմաթիվ հայկական կառույցներ ու կազմակերպություններ: Այստեղ գործում են հայկական ավանդական երեք կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, ՍԴՀԿ-ն և ՌԱԿ-ը: Լայն գործունեություն են ծավալում Կարմիր խաչը, Ֆրանսահայ Կապույտ խաչը, ՀԲԸՄ-ի, ՀՄԸՄ-ի, Թեքեյան, Համազգային մշակութային միությունների, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մասնաձյուղերը, «Նոր սերունդ» երիտասարդական պատանեկան միությունը, «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը, Ֆրանսահայ բժիշկների միությունը, Ֆրանսահայ իրավաբանների և փաստաբանների միությունը, Ֆրանսահայ միջմասնագիտական խմբավորումը, Հայ գործարարների ֆորումը և այլն:

Եվրոպահայ ամենախոշոր ու առավել լավ կազմակերպված համայնքը՝ Ֆրանսիայի հայ համայնքը, վերջին տարիներին աչքի է ընկնում նաև իր լոբբիստական գործունեությամբ: Այստեղ գործող կառույցներից պետք է առանձնացնել հատկապես Հայ դատի հանձնախմբի Ֆրանսիայի գրասենյակը (Armenian National Committee-France) և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (Co-ordination Council of Armenian organisations of France):

Հայ դատի հանձնախմբի Ֆրանսիայի գրասենյակը ֆրանս-հայկական քաղաքական ամենամեծ կազմակերպությունն է:

Կազմակերպության հիմնական նպատակներն են.

- ա) նպաստել հասարակական իրազեկվածության բարձրացմանն ի պաշտպանություն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի,

<sup>1</sup> Ղալլաբջյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 222:

<sup>2</sup> Տե՛ս Հայերն աշխարհում, Հանրագիտական համառոտ բառարան, Երևան, 1995, էջ 111:

- բ) ազդել Ֆրանսիայի և ԵՄ-ի քաղաքականության վրա հայկական համայնքին հուզող հարցերում,
- գ) ներկայացնել հայության միասնական տեսակետները պետական քաղաքական տարբեր հարցերի վերաբերյալ՝ ծառայելով իբրև կապ համայնքի և նրա ընտրած պաշտոնյաների միջև<sup>1</sup>:

Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբն ակտիվ է մի շարք ոլորտներում և ծավալում է քաղաքական և կրթական լայն գործունեություն: Նախաձեռնում է օրենսդրական փոփոխություններ հայությանը վերաբերող այնպիսի հարցերում, ինչպիսին են՝ Հայաստանի ամրապնդումը, որպես անվտանգ, բարեկեցիկ և ժողովրդավարական պետություն, աջակցություն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման գործընթացին և անվտանգության ապահովմանը, ԵՄ-ի կողմից ՀՀ-ին տրվող աջակցության մակարդակի բարձրացում ի նպաստ երկրի տնտեսական և ժողովրդավարական զարգացման, ԵՄ-ի կողմից ԼՂՀ-ին ուղղակի աջակցության տրամադրում, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչում, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ՀՀ շրջափակման վերացում՝ համաձայն մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների:<sup>2</sup>

Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը մասնակցություն է նաև Ֆրանսիայի և ԵՄ-ի համապետական, տարածաշրջանային և տեղական ընտրական գործընթացներին, պաշտոնյաներին ներկայացնում է հայությանը հուզող խնդիրները և ֆրանսահայ ընտրողներին տրամադրում է տեղեկություններ հայությանը առնչվող հարցերում թեկնածուների որդեգրած դիրքորոշումների վերաբերյալ:

Դեռևս 1990-ական թթ. Ֆրանսիայում գործում էր «Ապրիլի 24» կոմիտեն, որը 2001թ. հոկտեմբերի 21-ին Փարիզում հրավիրված արտահերթ ընդհանուր ժողովում վերանվանվեց Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդ (ՖԿՀԽ): Ժողովում ավուփվեցին նաև որոշակի կանոնադրական դրույթներ ու առանձնացվեցին գործունեության հիմնական ուղղություններ. անցկացնել ամենամյա ոգեկոչման միջոցառումներ 1915թ. ապրիլի 24-ին թուրքական կառավարության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, աջակցել ցեղասպանության ժխտման դեմ պայքարին և կանխել մարդկության դեմ իրականացվող հանցագործությունները, նպաստել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը և հետևանքների վերացմանը, համակարգել Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների գործողություններն ուղղված հայ համայնքին մտահոգող խնդիրների շուրջ, նպաստել ամբողջ աշխարհում ցրված հայերի

<sup>1</sup> Armenian National Committee of France, About CDCA, <http://www.cdca.asso.fr/s/english.php?r=10>:

<sup>2</sup> Սույն տեղում:

վերադարձին Հայաստան և Արցախ, նպատել Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների զարգացմանը, Ֆրանսիայում հայկական մշակութային ինքնության ամրապնդմանը, պայքարել ռասիզմի դեմ և աջակցել ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խտրականության զոհերին<sup>1</sup>:

ՖԿՀԽ-ի անդամ կազմակերպություններն են Ֆրանսահայ Կապույտ խաչը, Ֆրանսիայի ՀՅԴ-ի գրասենյակը, Նոր սերունդ մշակութային միությունը, ՀԲԸՄ-ն, ՀՄԸՄ-ն, Հայ դատի պաշտպանության հանձնաժողովը, Համազգային հայ կրթական մշակութային միությունը, «Սասուն» ասոցացիան, «Սուրբ խաչ» հայկական ասոցացիան և այլն<sup>2</sup>: ՖԿՀԽ-ի տնօրենների խորհուրդը կազմված է 17 հիմնական և 6 ժամանակավոր անդամներից:

ՖԿՀԽ-ն այս նպատակների իրագործման համար ծավալում է բավականին աշխույժ գործունեություն. հրապարակվում են բազմաթիվ աշխատություններ, փաստաթղթեր, կազմակերպվում են տարաբնույթ գիտաժողովներ և դասընթացներ, միջոցառումներ, խորհրդակցություններ, մրցույթներ, ցուցահանդեսներ, շնորհվում են մրցանակներ ու կրթաթոշակներ:

#### դ. Ֆրանսահայ լրբբիզմի հիմնական ուղղությունները

Ելնելով ֆրանսահայ համայնքի և նրա լրբբիստական կազմակերպությունների գործունեությունից՝ ֆրանսահայ լրբբինգը տեսականորեն կարելի է բաժանել երեք ուղղությունների.

ա. Հայոց ցեղասպանության ճանաչում,

բ. ԼՂՀ միջազգային ճանաչում,

գ. Այլ հարցերի բարձրացում (հայության իրավունքներ, ՀՀ-ին ու ԼՂՀ-ին օգնություն):

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում տասնամյակներ շարունակ հետևողական քայլեր են ձեռնարկել ինչպես ֆրանսահայ լրբբիստական կառույցները, այնպես էլ հասարակական կազմակերպություններն ու առանձին անհատներ: «Հայկական սփյուռքի արևմտյան հատվածի երկու ամենախոշոր կենտրոններում՝ ԱՄՆ (ավելի քան 1 մլն) և Ֆրանսիայում (շուրջ 500 հզ.),- գրում են տեսաբաններ Շեինը և Բարֆը,- ակտիվիստները միավորում են իրենց ջանքերը պահպանելու և տարածելու Ցեղասպանության հիշողությունը: Քանի որ Սփյուռքի շուրջ

<sup>1</sup> Organisations Arméniennes de France (Conseil de Coordination des CCAF), Statuts du CCAF, <http://www.ccaf.info/item.php?r=1&id=366>:

<sup>2</sup> Նույն տեղում, Membres du CCAF, <http://www.ccaf.info/item.php?r=1&id=364>:



80 տոկոսը Ցեղասպանությունը վերապրածների ժառանգներ են, ուստի այդ գազանության հիշողությունը դարձել է նրանց միավորման ամենակարևոր օղակը»:<sup>1</sup>

Ֆրանսահայությունը մասնակցություն է ունեցել պաշտոնական և ոչ պաշտոնական միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման բանաձևերի ընդունման գործում:

1984թ. Եվրախորհրդարանի քաղաքական հարցերով հանձնաժողովը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» խնդրով գումարեց առաջին նիստը: Նիստերում թուրքական դիվանագիտությունն ամեն ինչ արեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» զեկույցը աղավաղելու համար: Այս զեկույցումներին հետևում էր Եվրոպական հասարակությունը, ինչպես նաև ֆրանսահայ համայնքը, որը փորձեց ներազդել վերոհիշյալ բանաձևի ընդունման վրա: 1987թ. հունիսին Եվրախորհրդարանի պատգամավորներին դիմեց «Ֆրանս-հայկական համերաշխություն» հասարակական կազմակերպությունը, որի կոչի տակ իրենց ստորագրություններն էին դրել գրողներ Ֆրանսուազ Սագանը, Էժեն Իոնեսկոն և Անրի Թրուայան, երգիչ Շառլ Ազնավուրը, պատմաբան Իվ Տերնոն, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Անդրեյ Լվոֆն ու Լուի Նոելը և ուրիշներ: Նրանք խորհրդարանին կոչ էին անում «ցեղասպանություն որակել բնաջնջման այն ծրագիրը, որն իրականացվել էր հայերի նկատմամբ, և այդպիսով տեղ հատկացնել մարդկության և Եվրոպայի հիշողության մեջ նրանց, ովքեր դեռևս գերեզման չունեն այս աշխարհում»<sup>2</sup>: Նույն թվականի հունիսի 18-ին Եվրախորհրդարանը ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձև: Վերջինս էլ միջպետական կազմակերպության կողմից ընդունված առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որի մեջ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքական կառավարության գործողությունները Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ որակվեց որպես ՄԱԿ-ի 1948թ. «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով սահմանված ցեղասպանության դրսևորում:

Ֆրանսահայ լոբբիստական կառույցների գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ֆրանսահայության և առհասարակ հայության իրավունքների պաշտպանությունը հնարավոր բոլոր օղակներում: Ուստի ֆրանսահայության գործուն մասնակցությամբ Եվրախորհրդարանի կողմից ընդունված «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևում անդրադարձ կա նաև թուրքահայության իրավունքների պաշտպանությանը: Բանաձևում պահանջվում է, որ «Թուրքիայում

<sup>1</sup> Shain Y., Barth A., Diasporas and international relations theory, The Armenian case, <http://www.fas.nus.edu.sg/migration/newsevents/docs/Diasporas%20and%20IR%20Theory.pdf>:

<sup>2</sup> Մարուքյան Ա., Սփյուռքի ջանքերը միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման բանաձևերը ընդունելու գործում, [http://www.armeniandiaspora.am/images/menus/451/spyurqi\\_janqery.pdf](http://www.armeniandiaspora.am/images/menus/451/spyurqi_janqery.pdf):

ապրող հայկական փոքրամասնության նկատմամբ արդարացի վերաբերմունք լինի նրա ազգային ինքնության, լեզվի, դավանանքի, մշակույթի և կրթական համակարգի հարցերում»<sup>1</sup>: Որոշակի տեղ էր տրվում Թուրքիայի տարածքում հայկական պատմական հուշարձանների պաշտպանությանը և բարեկարգելու անհրաժեշտությանը:

Ֆրանսահայ համայնքը մեծաքանակ օգնություն է տրամադրել ՀՀ-ին և ԼՂՀ-ին: 1988թ. Սպիտակի երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու նպատակով հայ համայնքը ստեղծել է «Ազնավուրը՝ Հայաստանին», «SOS Արմենի», «Հույս Հայաստանին» կազմակերպությունները, որոնք իրականացրել են նաև երկարաժամկետ օգնության ծրագրեր. Գյումրիի «Մուշ» թաղամասում և Սպիտակ քաղաքում կառուցվել են դպրոցներ: Տարաբնույթ բարեգործական ծրագրեր են իրականացվել ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գյուղերում:

Ֆրանսահայության ակտիվ ու հետևողական ջանքերի շնորհիվ է նաև, որ Ֆրանսիայում կառավարական տարբեր մակարդակներում խստորեն դատապարտվել է Հայոց ցեղասպանությունը: 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի խորհրդարանը ճանաչել է 1915թ. Հայոց ցեղասպանության փաստը: 2001թ. Ֆրանսիայի Սենատը ընդունել է Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու մասին օրենք: Իսկ 2006 թ. ընդունված օրինագծի համաձայն, Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար քրեական պատասխանատվություն է սահմանվել: Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հուշարձաններ են կառուցվել Փարիզի շրջակայքում՝ Ալֆորվիլ, Իսի դե Մուլինո, Առնուվիլ դե Գոնես, Շարնտոն լե Պոն, Լիոնում և այլն: 2003թ. ապրիլի 24-ին Փարիզի կենտրոնում տեղադրվել է Կոմիտասի բրոնզե արձանը՝ «Երգահան Կոմիտասի և 1915թ. Օսմանյան կայսրությունում իրականացված 20-րդ դարի առաջին Ցեղասպանության զոհ 1.5 միլիոն հայերի հիշատակին»<sup>2</sup>:

2010 թ. ապրիլի 26-ին ԼՂՀ Արտաքին քաղաքականության եւ անվտանգության հանրային խորհուրդը դիմել է Սփյուռքի հայկական կազմակերպություններին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացն սկսելու կոչով: Երեք հայկական ավանդական կուսակցություններին եւ արտերկրի հայոց Սփյուռքի լոբբիստական կառույցներին հասցեագրված ուղերձում նշվում էր Սփյուռքի հայկական կազմակերպությունների կողմից Ցեղասպանության ճանաչման կարևորագույն հարցին զուգահեռ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հարցը որպես նրանց գործունեության հավասարազոր առաջնահերթային ուղղություն որդեգրելու անհրաժեշտությունը:<sup>3</sup>

<sup>1</sup> Կիրակոսյան Ա., Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմությունից, Երևան, 2006, էջ 186:

<sup>2</sup> Ֆրանսիայի հայ համայնքը, <http://old1.hayernaysor.am/1359982830>:

<sup>3</sup> ԼՂՀ ճանաչման հարցի արդիականացումը, <http://www.lragir.am/index/arm/0/comments/view/42546>:

Թեև Սփյուռքի հայկական լոբբիստական կառույցներն այս ուղղությամբ կատարել են որոշակի քայլեր, այնուամենայնիվ ԼՂՀ-ն այսօր ճանաչված չէ ՄԱԿ-ի անդամ որևէ երկրի կողմից: ԼՂՀ անկախությունը ճանաչել են կիսաճանաչված պետություններ Աբխազիան, Հարավային Օսիան և Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը, ինչպես նաև Ավստրալիայի Նոր Հարավային Ռելս նահանգն ու ԱՄՆ որոշ քաղաքներ: ԼՂՀ-ը դիվանագիտական ներկայացուցիչներ ունի ՀՀ-ում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Ավստրալիայում, Մերձավոր Արևելքի երկրներում և Գերմանիայում: ԼՂՀ-ին վերաբերող հարցում Սփյուռքի թերևս ամենամեծ ձեռքբերումը եղավ հայտնի N 907 բանաձևի ընդունումը ԱՄՆ Կոնգրեսում<sup>1</sup>:

2013թ. փետրվարի 26-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում Ֆրանսիայի Հայ դատի գրասենյակը կազմակերպել է «Սումգայիթյան ջարդերից 25 տարի անց, ներկա իրավիճակը և ապագայի հեռանկարները Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար» խորագրով համաժողով: Արդյունքում մարտի 19-ին, Փարիզում Ֆրանսիայի Հանրապետության քաղաքական գործիչները, Խորհրդարանի պատգամավորները և սենատորները կազմակերպել են ԼՂՀ-Ֆրանսիա բարեկամության շրջանակ, որի մեջ ընդգրկվել են Մարսելի առաջին փոխքաղաքապետ Ռոլան Բյուլոնը, Վիենի քաղաքապետ Ժակ Ռեմիլիեն, Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Ռենե Ռուքեն, Ֆրանսուա Ռոշբլուանը և ուրիշներ: ԼՂՀ-Ֆրանսիա բարեկամության շրջանակը սատարում է ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և հակամարտության խաղաղ կարգավորումը:

Վերջին տարիներին ֆրանսահայությունը մեծապես օգնել է սիրիական պատերազմի հետևանքով տուժած սիրիահայությանը: Ֆրանսիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի հեղինակ Վալերի Բուայեն էլ Ֆրանսիայի իշխանություններին կոչ է արել օգնել քեսաբահայությանը:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ Ֆրանսիայի հայ համայնքը նախապատրաստական աշխատանքներ է կատարում: 2015թ. հունվարի 28-ի ՀԿՀԽ-ի կազմակերպած ամենամյա ընթրիքին մասնակցել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոն, Ֆրանսիայում ՀՀ

<sup>1</sup> Ամերիկայի հայկական համագումարի (Armenian Assembly of America) և ՀՅԴ Ամերիկայի Հայ դատի հանձախմբի (ANCA) լոբբինգի շնորհիվ 1992թ. ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված Ազատության օժանդակման ակտում (ԱՄՆ Օրենքը՝ նորանկախ պետություններին ամերիկյան կառավարական օժանդակության տրամադրման մասին) ամրագրվեց N 907 բանաձևը, որով ԱՄՆ հրաժարվում էր որևէ օժանդակություն ցուցաբերել Ադրբեյջանին, քանի դեռ վերջինս չի հրաժարվել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ուժի կիրառումից և չի պարտավորվել ԼՂՀ հարցը լուծել խաղաղ ճանապարհով: 2001թ. սեպտեմբերին ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով, գործնականում N 907 բանաձևը հանվեց օրակարգից, սակայն ներկայումս շարունակվում է Լեռնային Ղարաբաղին տրամադրվող տնտեսական աջակցությունը: ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը բազմիցս Օբամայի վարչակազմին և Կոնգրեսին կոչ է արել աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը: Կոնգրեսում Ադրբեյջանի հակահայկական քայլերը դատապարտող ելույթներ են ունեցել Ջիմ Կոստան, Ադամ Շիֆը:

դեսպան Վիգեն Չիտեչյանը, Շվեյցարիայում ՀՀ դեսպան Շառլ Ազնավուրը, կառավարության անդամներ, տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ: Այս միջոցառմամբ էլ մեկնարկել է Ցեղասպանության 100-ամյակի ծրագիրը: Օլանդը իր խոսքում կարևորել է Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված քայլերի շարունակականությունը. «Ֆրանսիայի նախագահը հանդես եկավ ելույթով, որում մասնավորապես կոչ արեց թուրքական իշխանություններին ջանքեր գործադրելու՝ ճշմարտությանը առերեսվելու ուղղությամբ և հույս հայտնեց, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը իրողության ճանաչման ճանապարհին նոր փուլեր անցնելու և գործընթացին նոր շունչ տալու առիթ կհանդիսանա»<sup>1</sup>:

Թեպետ արդեն լրանում է Հայոց ցեղասպանության 100-ամյակը, բայց այն շարունակում է մնալ չդատապարտված, դեռ ավելին, թուրքական իշխանությունները նոր թափ են հաղորդում իրենց ժխտողական քաղաքականությանը: Ուստի Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման և դատապարտման, դրա հետևանքների վերացման, պատմական արդարության վերականգնման համար հայությունը պետք է միավորի իր ուժերը և առաջնորդվի «Հիշում են և պահանջում» կարգախոսով:

Ֆրանսահայ համայնքի ու նրա լոբբիստական կառույցների աշխատանքում առաջնահերթ է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, ինչն ազդում է արցախյան ձակատում նրանց ակտիվության վրա, բայց հաշվի առնելով դարաբաղաադրբեջանական շփման գոտում վերջին շրջանում առկա լարվածությունը՝ կարծում ենք, որ նրանք պետք է աշխուժացնեն իրենց գործունեությունը նաև այս դաշտում:

Ամփոփելով կատարված քննությունը՝ կարող ենք նշել, որ Սփյուռքի հայ համայքներն՝ ընդհանրապես, և ֆրանսահայ համայնքն ու նրա լոբբիստական կառույցները՝ մասնավորապես, եռանդուն պայքարում են հանուն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, նրա հետևանքների հաղթահարման, պատմական արդարության հաստատման, Հայրենիքի առավել հզորացման, ԼՂՀ-ի ինքնորոշման ու զարգացման, աշխարհասփյուռ հայության իրավունքների պաշտպանության, ազգային արժեքների պահպանման և զարգացման:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, [http://www.mfa.am/hy/press-releases/item/2015/01/28/genocide\\_france/](http://www.mfa.am/hy/press-releases/item/2015/01/28/genocide_france/):

**Астхик Мовсисян, \_Армянский лоббизм (на примере армянской общины во Франции)** - В данной статье мы исследовали лоббизм как явление, его основные виды. Так же был рассмотрен армянский лоббизм и основные организации, занимающиеся этим. Был проведен анализ армянских организаций, занимающихся лоббизмом во французской армянской общине, в результате чего были выявлены три основные направления их деятельности: а/ международное признание армянского геноцида, б/ международное признание Нагорно-Карабахской Республики, в/ международная помощь Республике Армения и Республике Нагорный Карабах.

**Astghik Movsisyan, The Armenian lobbying ( by the example of Armenian community in France)** - In the article we observed the concept of lobbying, its main types, as well as Armenian lobbying through its main foreign committees and organizations. Later on we did a research of Armenian lobbying organizations in France, based on which we separated three main directions of their actions: a/ the international recognition of Armenian Genocide, b/ the international recognition of Nagorno-Karabagh Republic, c/ assistance to Republic of Armenia and Republic of Nagorno Karabagh.

**Աստղիկ Մովսիսյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի սոցիալառնագիտության ամբիոնի մագիստրոս:**